ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/7 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Անվանումը՝ գնդակորսիչ: Պատին ամրացվում է երկաթյա թիթեղ՝ չափսերը 1000 մմ*2000 մմ*5 մմ (2 մ2), ոչպակաս 12 հատ M 20 մմ հաստության և L 150 մմ երկարության ինքնաձգվող (անկեռային) պտուտակներով: Երկաթե թիթեղի վրա 900 և 450 աննկյան թեքությամբ պտուտակներով ամրացվում են 12 հատ երկաթյա շրջանակները: Շրջանակների անկյունակների չափսերը՝ 50 մմ*50 մմ*5 մմ: Երկաթյա շրջանակների անկյունակների երկարությունները մոտ՝ 420 մմ և 300 մմ: Շրջանակների վրա պտուտակներով ամրացվում են 10 մմ հաստությամբ պողպատյա թիթեղները (շերտավարագույրաձև, ստորին և վերին հատվածներով իրար ծածկող ոչ պակաս 20 մմ-ով, պտուտակները նախապես զոդված են թիթեղներին ներսի կողմից), չափսերը՝ երկարությունը՝ մոտ 1000 մմ, լայնությունը՝ մոտ 430 մմ, 6 հատ (շարք), որոնք երկաթյա պատից գտնվում են մոտ մոտ 10 մմ հեռավորության վրա: Մետաղյա կառույցը ներկվում է հակակոռոզիոն նախաներկով: Հատակին՝ մետաղական կառույցի տակ, պատրաստվում է փայտե արկղ 400-500 մմ լայնությամբ և մոտ 1000 մմ երկարությամբ, բարձրությունը մոտ 200մմ: Արկղի հատակը՝ պատրաստվում է 50 մմ-ոց փայտով, իսկ շրջանակը 50 մմ*200 մմ-ոց փայտով: Արկղը ամբողջությամբ մշակված հականեխիչ նյութերով: Մետաղական կառույցից մոտ 100 մմ-200 մմ հեռավորության վրա առաստաղին ամրացվում է 50*50 մմ-ոց փայտե չորսու՝ մոտ 1200 մմ երկարությամբ, որից էլ կախվում է ռետինե վարագույր (ընդհանուր նշանակության կոնվեյերային փոխակրիչ գոտի), ոչ պակաս 10 մմ հաստության, մոտ 1700 մմ երկարությամբ և 2400 մմ բարձրությամբ, ձախ և աջ կողմերից շրջանաձև ամրացված պատին 50 մմ*20 մմ փայտե չորսույով և ներքևի հատվածից հպված հատակին, ծածկելով մետաղական կառույցը, իսկ ռետինե

	վարագույրի և փայտե չորսույի շփման հատվածը ծածկվում է 50*50 մմ-ոց փայտե չորսույով՝ որն էլ ամրացվում է քողարկված պտուտակներով։ Այլ պայմաններ 1. Ապրանքը պետք է լինի չօգտագործված։ 2. Ապրանքի մատակարարումը, բեռնաթափումը և տեղադրումը իրականացնում է մատակարարը, իսկ փորձարկումը՝ գնորդն ու մատակարարը միասին։ 3. Ապրանքի համար երաշխիքային ժամկետ է սահմանվում գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացույցային օր։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ИП ЮРИ ТОНОЯН АРАИКОВИЧ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/7 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	